

Կարծիք

Շուշանիկ Իշխանի Ջաքարյանի «Բայի սեռի ձևաբանական, շարահյուսական եվ իմաստային յուրահատկությունները ժամանակակից թուրքերենում (հայերենի գուգադրությամբ)»

Ժ. 02.02. <<Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն>>

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների

թեկնածուի գիտական

աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգը ցայսօր շարունակում է մնալ թյուրքագետ-լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Թուրքերենի բայի սեռը, ունենալով ձևաբանական, կապակցական-շարահյուսական և իմաստային դրսևորման յուրօրինակ հատկանիշներ, որոշակի դժվարություններ է առաջացնում բայի սեռի կարգը հստակ սահմանելու հարցում: Այդ տեսակետից էլ սույն ատենախոսության արդիականությունը կարևոր է ինչպես թուրքերենի լեզվական այս իրողության վիճահարույց կողմերը քննելու, այնպես էլ հայերենի գուգադրությամբ թուրքերենի դասավանդման գործընթացում և թարգմանություններում ճշգրիտ համարժեքները վեր հանելու հարցերում:

Ներածության մեջ հստակ նշված են ուսումնասիրվող թեմայի հիմնահարցերը, արդիականություն, նորույթը, տեսական արժեքը ու գործնական կիրառության նպատակները:

Ամենայն բարեխճությամբ ներկայացված են հարցի պատմությանը վերաբերող թյուրքագետ-լեզվաբանների առավել նշանակալից ուսումնասիրությունները, վերլուծական մոտեցումները, վեր են հանվել բայի սեռի վերաբերյալ նրանց սահմանումներն ու տեսակետները:

Քանի որ թուրքերենի բայի սեռի շատ նրբերանգներ չունեն հստակ սահմանումներ, ուստի ատենախոսը փորձ է արել քերականական այս կարգի վերաբերյալ հայ լեզվաբանների ուսումնասիրության արդյունքունքները պրոեկտել թուրքերենի բայի սեռի կարգի վերլուծություններում՝ զուգադրության մեթոդի կիրառումով վեր հանելով նմանություններն ու տարբերությունները: Այս մոտեցումից շահել է ատենախոսությունը և նրա կիրառական նշանակությունը:

Հատկապես հարկ ենք համարում նշել, որ ատենախոսության մեջ օգտագործված թուրք լեզվաբանների բայի սեռին վերաբերող նկարագրողական բնույթի ուսումնասիրություններից ատենախոսը կարողացել է ի մի բերել նրանց տարաբնույթ սահմանումներն ու բայի սեռի դասակարգումները, մանավանդ, որ մինչ 1950-60-ական թթ. թուրք լեզվաբանները թուրքերենի բայի սեռի մեկնաբանություններում տուրք էին տալիս արաբական քերականության ավանդույթներին, ինչն էլ բարդացնում է հարցի ուսումնասիրությունը:

Քանի որ թյուրքական լեզուները, այդ թվում թուրքերենը, ունեն, քերականական իրենց առանձնահատկությունները, ապա կարծում ենք, որ ատենախոսը իրավացիորեն թուրքերենի բայի սեռը քննել է՝ հիմք ընդունելով առավել ժամանակակից թյուրքագետ-լեզվաբանների այս կարգին վերաբերող դասակարգումները: Ըստ այդմ էլ՝ թուրքերենի բայի սեռի քերականական կարգն ատենախոսության մեջ ներկայացվել է հինգ սեռային տարբերակումով, որն ավելի ճշգրտորեն է վեր հանում թուրքերենի քերականական այս կարգը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Առաջին գլխում՝ «Ժամանակակից թուրքերենի բայասեռի ուսումնասիրության տեսական հիմքերը», ներկայացվել է ժամանակակից թուրքերենի բայի ընդհանուր բնութագիրը, ի մի են բերվել և վերլուծության ենթարկվել թուրքերենի՝ բայի սեռի կարգի վերաբերյալ սահմանումները, վեր են հանվել բայասեռի տեսակների

դասակարգման օրինաչափությունները: Ատենախոսը քննության է ենթարկել թուրքերենի բայական անցողականությունն ու անանցողականությունը՝ հայերենի գուգադրությամբ: Նրան հաջողվել է ցույց տալ թուրքերենում անցողականության ու անանցողականության նրբերանգները: Համապատասխան վերլուծության և բերված լեզվական փաստերի հիման վրա միանգամայն իրավացիորեն Շուշանիկ Ջարքարյանը եզրահանգել է, որ թուրքերենում անցողական են կոչվում այն բայերը, որոնց արտահայտած գործողությունն ազդեցություն է գործում մեկ այլ առարկայի վրա և բայերի՝ օբյեկտի հետ ունեցած հարաբերության տեսանկյունից բաժանվում են երեք խմբի՝ *ուղիղ-անցողական, կրավորական-անցողական, անանցողական*: Թուրքերենի լեզվական առանձնահատկությունը թելադրում է տարբերել երկու տեսակի անցողականություն և անանցողականություն, այն է՝ սկզբնաձևային (կամ սկզբնատիպային) և ձևակազմական: Ձևակազմական անցողականությունը և անանցողականությունը այս կամ այն բառույթի մեջ ի հայտ է գալիս հատուկ ձևակազմությամբ: Քանի որ թուրքերենի *պատճառական, կրավորական, փոխադարձ-համատեղ և անդրադարձ սեռերը* կազմվում են հիմնական (ներգործական) սեռից որոշակի ածանցներով, ապա դրանց արտահայտած անցողականությունը կամ անանցողականությունը ձևակազմական է:

Երկրորդ գլխում՝ **«Թուրքերենի ներգործական (հիմնական) *Etken/Yalin Çati* սեռի իմաստաքերականական հայեցակարգը**», վերլուծության է ենթարկվել թուրքերենի ներգործական կամ հիմնական սեռի և ուղիղ խնդրի հետ ունեցած նրա հարաբերությանը:

Երրորդ գլխում՝ **«Կրավորական սեռի իմաստակառուցվածքային և կիրառական առանձնահատկությունները**», քննության են ենթարկվել թուրքերենի կրավորական սեռի կազմության հիմնական օրինաչափությունները, ինչպես նաև եղած բնութագրումներն ու սահմանումները: Վեր են հանվել հայերեն թարգմանական համապատասխան կաղապարաձևերը: Նաև ցույց են տրվել թուրքերենից հայերեն և հակառակը թարգմանության ժամանակ շարահյուսական մակարդակում ի հայտ

եկող փոփոխությունները: Ատենախոսն անդրադարձել է նաև թյուրքական լեզուներում բայի սեռեր կազմող ածանցների ծագումնաբանությանը և տիպաբանական նմանություններին:

Չորրորդ գլխում՝ «Անդրադարձ և փոխադարձ սեռերի իմաստակառուցվածքային արժեքը և շարահյուսական դրսևորումները» քննության են ենթարկվել թուրքերենի անդրադարձ և փոխադարձ սեռերը: Ժամանակակից թուրքերենի բայի այս սեռերն իր ձևաբանական - շարահյուսական դրսևորումներով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում:

Հարկ ենք համարում նշել, որ ատենախոսը, բարեխճորեն օգտագործելով համապատասխան ուսումնասիրությունները, կարողացել է վեր հանել այս սեռերի գործառույթները: Թուրքերենում անդրադարձ սեռը կազմվում է կրավորական սեռի ածանցներով, և այս հանգամանքը որոշակի շփոթ է առաջացնում: Որոշ բայերի սեռային այս դրսևորումը արտահայտվում է շարահյուսական մակարդակում: Հենվելով հայ լեզվաբանների ուսումնասիրությունների վրա՝ նաև հաշվի առնելով թուրքերենում այս սեռի քերականական, իմաստային և շարահյուսական դրսևորումները, Շուշանիկ Ջաքարյանը միանգամայն իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ թուրքերենի անդրադարձ և փոխադարձ սեռերը համընկնում են հայերենի չեզոք սեռին:

Հինգերորդ գլխում՝ «Ժամանակակից թուրքերենում պատճառականության սեռային դրսևորումները» վերլուծության են ենթարկվել թուրքերենի պատճառական սեռի ձևաբանական և շարահյուսական դրսևորումները, իմաստային նրբերանգները: Ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգում թյուրքագետ-լեզվաբանները առանձնացրել են պատճառական սեռը: Թուրքերենի պատճառական սեռը կազմվում է անցողական և անանցողական բայերից՝ ելակետային բայի հիմքին ածանցներ ավելացնելու միջոցով: Ատենախոսը ներկայացրել է այդ սեռի վերաբերյալ եղած տեսական մոտեցումները: Մինչ օրս թյուրքագիտության մեջ պատճառական սեռի

քերականական և բառային իմաստների միջև դեռևս հստակ սահմանազատում չկա, քանի որ բառակազմության գործընթացը տեղի է ունենում անընդհատ: Ըստ այդմ էլ՝ պատճառական սեռը կազմվում է մի քանի ածանցների միջոցով, որոնք միանում են տարբեր բայական հիմքերի կամ հանդես են գալիս որպես պատճառի տարբեր աստիճանների ցուցիչներ: Լեզվական փաստերով ատենախոսը ցույց է տվել, որ թուրքերենում պատճառական սեռը կազմվում է անցողական բայերից՝ դարձնելով դրանք երկակի, կամ անգամ եռակի անցումային: Ինչ վերաբերում է *անանցողական հիմքերին*, ապա դրանք միանալով պատճառական սեռի ածանցներին՝ հնարավորություն են տալիս նրանց զուգակցվելու ուղիղ խնդրի հետ, այսինքն՝ փոփոխության են ենթարկում օբյեկտային կապերը: Վեր են հանված այս սեռի տիպաբանական նմանությունները թուրքական լեզուներում, մասնավորապես ադրբեջաներենում և նողայերենում: Միանգամայն իրավացիորեն է եզրահանգել ատենախոսը, որ թուրքերենի պատճառական սեռի բայերի հայերեն թարգմանությունը կատարվում է ինչպես պատճառական *-ացն, -եցն, -ցն* ածանցներով, այնպես էլ մի շարք բայերի համադրությամբ՝ ստիպել, հրամայել, կարգադրել, թույլ տալ:

Եզրակացության մեջ ամփոփելով նախորդ գլուխներում կատարված վերլուծությունները, ատենախոսը ներկայացրել է իր եզրահանգման դրույթները, ամփոփելով թուրքերենի բայի սեռի քերականական կարգի սահմանման իր մոտեցումները:

Դրական գնահատելով արված աշխատանք՝ այնուամենայնիվ ուենք մեր դիտարկումները.

1. Կցանկանայինք ատենախոսության մեջ տեսնել թուրքական գեղարվեստական գրականությունից բերված առավել շատ օրինակներ:

2. Ցանկալի կլիներ նաև անդրադառնալ թուրքերենի բարբառներում բայի սեռի դրսևորումներին:

3. Աշխատանքում տեղ են գտել նաև որոշ տեխնիկական վրիպակներ:

Նշված դիտարկումները սակայն որևէ կերպ չեն նսեմացնում
ատենախոսությունը:

Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրատարակած
հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու
բովանդակությունը:

Ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական
ատենախոսությունների պահանջներին, իսկ հեղինակը՝ Շուշանիկ Իշխանի
Զաքարյանը, միանգամայն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բանասիրական գիտությունների թեկնածու, համատեղությամբ ԵՊՀ
թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ
Լուսինե Ավետիսի Խաչատրյան

Լուսինե Խաչատրյանի ստորագրությունը համապատում էմ
ԵՊՀ գիտական քարտուղար՝ Բ. Գ. Ե. Հովհաննիսյանին
01.12.2022թ.

